

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար սարեւ-
կան 10 ֆրանկ : Վեցամե-
սեայ 5 ֆրանկ : Արտասահ-
մանի համար սարեւկան 12
ֆրանկ, Վեցամսեայ 6 ֆր.
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԻԻ

Գրութիւնք և՛ չեմ տրուիր :

Իրանուցեան տոյր 20 սան-
քիս Կ :

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ ՔԱՂԱՍԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶՈՐԵՆԻ ԵՒ ՇԵՐԱԹ ՈՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
Адвокатъ


Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie).

Գին 10 ՍԱՆԹԻՄ

Չատկի տօնին պատճառով առաջի-
կայ չորեքշաբթի Շարժում չի հրա-
տարակուիր :

ԶԱՏԻԿԸ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ



Որչափ կուզես շանա ինքզինքդ
զերծ պահել նախապաշարման,
աւանդամուրթեան սեղմումնե-
րէն : կրթութիւն, միջավայր,
օտար ճնշող ուժերն բարքեր մի-
անալով չեն կրնար էութենէդ
զուրս վանել ինչ որ մնացած է
հոն մանկութեանդ մշակարար յի-
շատակներէն, հայրենիքիդ վա-
ղնջուց պատմութեան նշխարնե-
րէն ու պայծառական երգիքիդ
սիրագին յուշքերէն :

Երբ օտար հոգի վրայ Չատիկը
գայ իր երկնագեղ երկիրքովն ու
կարմրուկ հաւկիթովը, հնա՛ր է
մաքի հեշտական սլացումով մը
չերթալ չնստուիլ հին, բայց
թարմ յիշատակներու ծովի մը
մէջ, ուր ալիքները ինչպէս հո-
լովումը կեանքի անցեալ գըր-
ուագներու՝ կը թաւալին, սակի
չող զանակներ արեւի լուսեղ լու-
գանքի մը մէջ :

Երկրորդ Չատիկն է որ կը ըս-
տենք հեռու մեր ծննդավայ-
րէն, մեր մտերմներէն, բոլոր
այն սիրուն բաներէն որոնք,
թէեւ ինքնին ոչնչութիւններ,
կեանքը կապրեցնեն սակայն :
Ամերիկայէն մինչեւ Եգիպտոսի
խորերը ցանցնում, ժողովուրդ-
ներու կուռ և խուռն փաղանգ-
ներուն մէջ կարտուած հազարա-
ւոր հայեր ինքնաբեր շարժու-
մով, միեւնոյն բնազդական գըր-
ուումով իրենց հոգիին, իրենց
մտքին, ու իրենց զգացումնե-
րուն լայնաբեր աչքովը, ար-
ցունքով լեցուն, կը դառնան կը
յառին միեւնոյն կէտին : հայ-
րենիքի մեծ տանը :

Ա՛լ Չատիկը մեզի համար մեծ,
փառայեղ տօն մը չէ, պատըր-
ուակ մը սիրա ծմող, հոգի չար-
չարող յիշատակներու վերգարթ-
նումին, անխուսափելի առթի մը
որ մենք՝ պահ մը հեռանալով
ներկայի, երէկի ու վաղորդայնի

դառնութիւններէն, խելայեղօ-
րէն պլուրինք մեր անցեալ
կեանքի հեշտութիւններուն, ու
րոնց ամենէն մանրը հիմա մեր
աչքին հսկայ համեմատութիւն-
ներ, հրապուրիչ գոյներ կատա-
նայ :

Եւ իրօք ամէն ժամանակէ ա-
ւելի պէտք ունինք անցեալի ծի-
րանագեղ յուշերովն ապրելու, ա-
նոնցմով գէթ միխթարելու մեր
արիւնտամ հոգիները : Այն
քրիստոնեայ մեծազօր տէրու-
թիւնները որոնց շատ մօտիկ
կապրի այսօր հայութեան մէկ
մասը, և որոնց մէջ այնքան մեծ-
վայելուչ հանդիսութեամբ կը
վառարանուի Փրկչին՝ Վարու-
թիւնը, անսիրտ ու զլուելի կեղ-
ծապարիշտի մը տպաւորութիւնը
չե՞ն գործեր իրենց սառուցիկ
անտարբերութեամբ հանդէպ ա-
մենէն քրիստոնէավայել, ամե-
նէն ասուածահաճոյ գործին,
տառապող, հեծող հայութեան
փրկութեանը :

Չատիկը, մեր քրիստոնէական
մարտիրոսութեանը արհաւիրք-
ներուն մէջ, մեր ամայացած
հայրենիքին աւերքներուն վրայ,
մեր դառնակակիծ օրոտերուն խո-
րը շատ աւելի երկնային վսե-
մութեամբ մը կը շողայ, քան
այդ ոսկեվառ քաղաքակրթու-
թեան կեղծիքներուն վրայ : Իր
ման գիշերի պարիկը՝ հայ գաղ-
թականի մութ, խեղճուկ խղիկը
աւելի խնդում, աւելի գոհունակ
դէմքով կը մտնայ քան մեծա-
գոռ փառայեղ տաճարները քա-
ղաքակրթութեամբ Եւրոպայի :

Մեր ազգային ճակատագրին
տխուր այս կոծանքին մէջ, մեզ
միխթարող միակ մտածումը ա՛յս
պէտք է ըլլայ : Քառասորդա-
ւան պաքի փորձութիւնը չենք
անցուցած դեռ : Չատիկները պլ-
տի գան անցնին մեր վրայէն,
ցնծութիւն բերելով ուրիշներու,
իսկ շեշտելով մեր սուգն ու թա-
խիծը : մենք պիտի շարունա ենք
մեր ձե՛ր պաքը, որ գուցէ յու-
սահասեցուցիչ երկարութիւն մը
ունենայ : պիտի տոկանք անոր
սուայանքին, պիտի հանդուր-

ժենք այս ճակատագրական տա-
րուբերումներուն, մինչեւ որ գայ
հասնի ճշմարիտ, իրական Չա-
տիկը, ճաճանչաւոր, ցնծալից,
ու խթման գիշերի պարիկը զը-
ւարթ թեւաբարութեամբ սլանայ
մեր վերականգնուած յարկերէն
ներս, և պայծառ, հնչուն ձայ-
նով աւետէ :

—Քրիստոս յարեա՛ւ ի մեռե-
լոց :

ՇԱԽԱՐՇ

ԱՐՑՈՒՆՔԸ

(ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ)

Ա.

Չա՛նկ, զա՛նկ, զա՛նկ . . . : Չա-
տիկին առտուն է : ապրիլեան ցինջ
և կոյս մթնորոտին մէջէն, հայկա-
կան եկեղեցիին զանգակները իրենց
զուարթ և աշխուժ զօղանչիւնները
կը ցանցնէին քնացող քաղաքին վր-
այ : զա՛նկ, զա՛նկ, զա՛նկ . . . :

Լուսիկ խաթուն, աս սրբազան
կոչին առաջին հրաւերին արթնցաւ
իր քուռէն, արտաբանքով հազաւ իր
հինցած շրթեր, քանի մը կաթիլ
ցուր սրսկեց երեսը, և ուղղուեցաւ
եկեղեցի :

Քառասորդ գաղթական հայ կին
մըն էր ան, դեռ նոր մտած 40ր,
բայց հակառակ իր առոյգ և հա-
րուստ կազմուածքին, վերջին արիւ-
նտ տարիներու աղետարչ գէպերը
ժամանակէն շատ առաջ սպառած էին
անոր ազդուութիւնը և ուժը : Ար-
ցունքը աւրած էր անոր լոյս աչքե-
րուն նայուածքը, կակիծը թոռմե-
ցուցած էր այտերուն վարդը ու փո-
խարէն բացած ցաւի սփռոյն ծալ-
քեր, և գաղթականի անուշաղ կեան-
քը ճկած էր անոր ուղղաձիգ իրանը,
ու հիմակ իր լեցուն ու հասուն օրե-
րուն մէջ ութսունամեայ կատար-
եալ պատաւի մը կերպարանքն էր
մտած : Իր մարմնին քայքայումին
հետ, քիչ քիչ իր գիտակցութիւնն
ալ պղտորած, և զգայութիւնն ալ
բթացած էր : Բայց դեռ բան մը ա-
մուր կը մնար իր մէջ, ատիկա հա-
ւատքն էր, անխաղախ, միամիտ
հաւատք մը, որ իր ամենէն ցաւա-
տանջ օրերուն իսկ բնաւ չի թուր-
ցաւ, չի պոկուեցաւ իր մէջ :

Ինկած Գանուրի մէկ անկիւնը,
անմանօթ միջավայրի, անտարբեր
դէմքերու և անսովոր կլիմայի մը
մէջ, իր սրտին ու հոգիին մօտիկ
լսի եկեղեցին կը մնար, ընտանի,
բարեկամ վա՛յր մը, ուր Աստուածա-

մօր պատկերին առջին ծնրազիր, ա-
զասօրէն կրնար իր սիրաբ բանալ :
Այդ սրբազան տաճարը պատիկ հայ-
րենիք մըն էր իրեն համար, և իր
մէջ մնացած բոլոր պաշտումը, գո-
րովը ու խանդաղատանքը կը գու-
մարէր անոր վրայ :

Ամբողջ քառասորդական սուգի
օրերը ծոմ ու պահք պահելով անցու-
ցեր էր : հիմակ Չատիկի աս առ-
տուն, կաճապարէր ամենէն կանուխ
հասնիլ եկեղեցի տօնելու Աստուա-
ծորդոյն հրաշափառ յարութիւնը : Ու
երբ հա. աւ հոն, իր հին ուխտին և
սովորութեանը հաւատարիմ, հատիկ
հատիկ պագաւ բոլոր խաչքարերը,
խաչակնքեց և ծնրազրեց ամէն մէկ
պատկերի առջեւ, ու հաքը վերնա-
սան մէկ անկիւնը քաշուելով ծունկի
եկաւ, և ամբողջովին թաղուեցաւ
արարողութեան ելուէջներուն մէջ :

Բ.

Չա՛նկ, զա՛նկ, զա՛նկ . . . Եկեղե-
ցիին զանգակները միշտ կը հնչեն,
բազմութիւնը քիչ քիչ կը շատնայ,
տեղացի և գաղթական ամէն սեռէ և
հասակէ հաւատացեալներ, իրենց սօ-
նական օրերու արդուզարդին մէջ
պլուսած, զաւթիթին և վերնատան
զատարկութիւնը կը լեցունեն :

Գլխինքու երգեցողութիւնն ալ
կամաց կամաց կուժովար, կը բարձ-
րանար և կամարներուն տակ անդ-
րադանալով զուարթ ոգեւորութիւ-
նով մը կը ցնցեր հաւատացեալները :
Լուսիկ խաթուն, իր անկիւնին
մէջ մի տ ծնրազիր, բոլորովին ըն-
կզմուած սուրբ գաշնակութիւննե-
րուն մէջ, չէր տեսներ ոչ իր բո-
լորտիքը եռացող բազմութիւնը, ոչ
անոնց ճոխ արդուզարդը. և ոչ ալ
Չատիկը, կանթեղներու և կերու-
ներու հազարաւոր պլուրթները :

Գլխինքու ընտանի եղանակները
թուրթէն կը գգուէին իր ընդարմա-
ցած ուղեղը, ու յիշատակներու ծրա-
րըն էր որ մեղմօրէն կը քակուէր,
աշխուհներու սլաքներուն տակ անց-
եալին մշուշ քիչ քիչ կը հալէր,
կիչնար վար :

Ետ, շատ ետ կերթար, գէպի իր
սիրական հայրենիքը. մանկական
թարմ օրերու երեւոյթը, նախապէս
տարտամ ու անորոշ, քիչ քիչ աւելի
յստակ ու մաքուր կը պայծառանար
իր մէջը : Ինք պարտիկ, խատուտիկ
աղջիկ մը, նախչուն հերարի մը հա-
գած, գրպանը կարմիր հաւկիթներով
լեցուն, իր ընկերուհիներուն հետ կը
վազվազէր հոս հոն : Աւելի ետքը նը-
շանած աղջիկ մըն է, և բազմու-
թեան մէջէն գաղտնի կը դիտէ իր
փեսան որ ձյոյ՛ճ կը խաղայ :
Այս անուշ օրերու, երազ յուշե-

Moschelschreiber
N. 4
Dieme (Kutschka)

բաններուն մէջ, ամէն տարի, տե ալ մը պլանկերպութեան այդ տօները եկան ու գացին:

Չատիկը քրիստոնէութեան յալ- թանակն է. Քրիստոնէութիւնը, իր նախկին սրբութեան ու մար- րութեանը մէջ, եղբայրութեան, հաւատարմութեան յալթանակն է: Իր աստուածային հերոսին վրայ, խտացնելով այն ամէն ինչ որ գերագոյն է մարդու մէջ, ինչ որ չմեռնիր՝ մեռելութեամբ սահ- մանաւորուած խեղճ մարդուն վրայ, Քրիստոնէութիւնը թոյլ կուտայ որ հին կրօնքի նախա- պաշարուները, դարերով ուժով- ցած ու բրտացած, շահագործու- թիւններ՝ իրաւունքներու կարգը անցած՝ միաբանին մէկ հոգիի դէմ. կայսրութիւն մը իր կա- խաղանի գործիքը տայ և ամ- բոյն ալ, միշտ երբուն, պոռա- ցող, ուժին առջեւ հոգին առ- տանուող ծիանքի պէս, այդ մէ- լին ոչնչացումը խնդրէ ահաւոր դողաւով, «Թող մեռնի անիկա, թող մեռնի անիկա»... և կը մեռնի ան՝ յաւիտենական պէս անմահ. իր վրայ խնդացողն ու երեսին թքնողը ամբոխն է գարձ- եալ, մոլի՛ և մըրկայոյզ. իր խաչին ու մեռելին վրայ ծիծա- ղողը՝ գարձեալ նոյն ամբոխն է: և ասոյն ծափ կը զարնեն փա- րիսեցիները, ուղած փքուած իրենց շահերուն անկորուստ պահ- պանմանը համար:

Քայց և այնպէս կախաղանին հետեւեալ օրը եկած է. արցունք- քին իրիկունը կանցնի: Քարոզ- ուած սկզբունքներ, հովիտի մը

սրինգին երգերուն չափ անո՛ւշ ու քնքուշ, վարդին ու շուշանին հետ ծաղկած էին. նախապաշա- րուները կը կարտուին ու կը թափին փոսած թեւերու ցանցի մը պէս. մեռած ձայնի մը ար- ձագանդը կարթննայ ականջներու և սրտերու մէջ. մարդը չկայ, այլ վարդապետութիւնները ի- ընց բոլոր ուժովը կը կանգնին հին սրբութիւններու՝ կեղծաւո- րութեան, շահամոլութեան, խաբ- դաւանանքի ու միջին դաւերու ա- լեքակներուն վրայ: և յաղթու- թիւնը կը տօնուի... և ամբոխը, որ ախմարօրէն երէկ գործիք էր միջին գասակարգերու ձեռքը, այսօր ինքն է որ ամենքէն ա- ռաջ իր ներսիդին կը լսէ տար- բեր ձայներ, խղճի ու ինքնա- ճանաչութեան ձայներ: Ո՛ր է ան որ կը պոռար. «Թող մեռնի անիկա, թող մեռնի անիկա»: Հեղիկ գառնուկի մը պէս, վիզը ճկած կուրծքին վրայ, աչքերը ամօթով լեցուն, ճակատին վրայ շառագունանքը, սարսուռ մը ամբողջ ջիւղերուն մէջ, այրող կարմրութիւն մը իր խանձած այտերուն վրայ, գէպի վար կը ծռի, իր ոտքերուն վրայ, որոնք վաղած էին դուրէն եկած ամէն շահատէր ու նենգաւոր ձայնի: Ո՛ր է, դարձիր գէպի վեր. տե՛ս անիկա՛ որ երէկ, կրակ ու սուր կարած, թուրերով, ծաղրունքով կը լուայիր. ան կեցած է զիմացող մարդու ու նորստեղծ ուսած, վարդի ու շուշանի գոյ- ներ հագած է. իր անո՛ւշ նայ- ուածքը քեզի կը յառի գիծու-

թեամբ լեցուն. ձեռքերը բաց՝ քեզի կեղծանանքներու դարձիք՝ դարձիր, նայէ՛, լաւ նայէ, ու զիտցիր որ ամէն գաղափարական կռիւններու մէջ, ուր դուն մո- լեցնար իրիկունն արցունքը կը շինես, ծիծառնի երանգնե- ներով և արախութիւնը կուգայ առտուն: և այսպէս քու պաշ- տած ու խնկած գիրքէդ երեսիդ կը զարնեն. «Իրիկունը՝ արցունք, առտուն՝ ուրախութիւն»:

Ա Ղ Ք Ա Տ Ա Ն Ա Մ Ի Ն

Չատիկ այս տօնական օրերուն մէջ է որ ամենէն աւելի կը շեշտուի բարեգործութեան, սղորմասիրու- թեան պէտքը: Դեռ ի՛նչ խեղճու- թիւններ խոր խոր թաղուած կը մնան վատնախի մէջ, հակառակ այն- քան չքաւորներու շտապող մեկնու- մին: Եւ աւելի բան չէ՞ որ կեցած Աղ- քատախնամը ինքզինք կամաւ ան- գործութեան գատապարած է առանց բանաւոր պատճառի: Մենք կը յու- սանք սակայն թէ այն բարեբար սրտերը սրտնք՝ Աղքատախնամի մը միջնորդութեամբ պիտի յօժարելին ի- ընց սփոփարար նպատակն ընել ի- ընց աղքատ եղբայրներուն, դարձ- եալ չպիտի թեւանան իրենց պար- տակալութիւնն, բազմակի կարկան- լով այդ օգնութիւնը:

Տեղն է սակայն հոս հարցնել Աղ- քատախնամի պատուարժան գործիչ- ներուն թէ ի՞նչ կը ան հանգանակ- ուած գրասիրտ, ո՛ր ծախսուեցան կամ սրտն քով կը գտնուին: Թող աճապարեն այս մասին լուսաորիւն հարարակութիւնը, ապա թէ ոչ ան- նպաստ կարծիքներ պիտի գոյանան, սրտնք ու զգալի պարոն սնդուան երուն պատիւը խնդրի աստիճան պիտի ը- նեն:

—)(—)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՍՊԱՆԻԱ ԵՒ Մ. ԳՆՆԱՆԳՆԵՐԸ

Ոչ պակաս հաշտարար եւ ազգեցիկ միջամտութիւնը, ոչ Միացեալ-Նա- հանգներու առաջարկն ազգեց Մատ- րիտի կառավարութեան վրայ ձեռք բերելու համար զինադադար մը Գու- սալի մէջ և երկու կառավարութիւն- ներու յարաբերութիւններուն:

Այս բոլորէն աւելի խօսք քաղցր- նողն կը աւելուի վեց մեծ աչքու- թիւններուն հաւաքական միջամտու- թիւնը իրենց Մատրիտի և Ուաշինգ- թընի ներկայացուցիչներուն ձեռ- քովը:

Այսպէս, մարտ 29ին, Մատրիտի վեց դեսպանները ելան գացին ար- տաքին գործերու պաշտօնատունը և իրենց կառավարութիւններուն կող- մէ պաշտօնապէս ծանուցին թէ խա- ղաղութեան համար զինադադար ան- հրաժեշտ է:

Նախարարապետ Պ. Սակասալ խոր- հրդակցեցաւ իր պաշտօնակիցնե- րուն հետ և որոշուեցաւ ընդունիլ զինադադարի առաջարկը:

Գուպալի Սպանիական բանակին ընդհանուր հրամատար Մարեշալ Պլանքօի արգէն հեռագրուած է այս կարեւոր որոշում, զինադադարի պայ- մաններուն և սահեղութեան գործը յանձնուած է Մարեշալին, վասն զի կառավարութիւնը կատարեալ վստա- հութիւն ունի անոր հայրենասիրու- թեանը և խոհեմութեանը վրայ:

Հետեւապէս, Միացեալ-Նահանգ- ներու և Սպանիոյ վէճը նոր երե- ւոյթ մը կստանայ յանկարծ, և մինչև մէկ աստիճան յոյս կուտայ նպաստուոր կարգադրութեան մը յանգելու, և գործը առանց արիւ- նահեղութեան, առանց պատերազմի վերջացնելու:

—)(—)

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻՎՈՒԹՅԱՆ ԵՒ ՏՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ (12)

Ի հարկէ մենք խօսում էինք և այն գիտարարութիւնների մասին, ուրնք ներկայաշարու էին սոսանայ երկտասարդի համար. քանի որ նա ոչ լիզու գիտէր և ոչ ալ տեղական պայմանների հետ էր ծանօթ: Սա- կայն բոլոր էլ գալիս էինք այն եղ- բակացութեան որ պէտք էր սկսել, պէտք էր գնել և մանկ ժողովրդի մէջ, թէկուզ համոզված լինելով որ նենց առաջին վայրկեանում պէտք է կորչէր, ոչնչանար:

Այդ ձևերը շատ մօտիկացյ Ռար. Գրի հետ, որը 83 թւին ինձ հետ մի- պին արտաքուցած էր ձեմարանից և հիմա արեւադարձական գպրոցում փակահարգործութիւն էր սովորում. թէև ձեմարանում նրա հետ այնքան լարեկամ չէինք, սակայն այստեղ ի- րար աւելի լաւ ճանաչելուց յետոյ գրեթէ երկու եղբայրներ գործանք և սկսեցինք մտածել մեր նպատակը իրագործելու մասին: Նրա միջոցաւ ծանօթացայ և տեխնիկական գպրոցի վերջին դասարանի մի լուսանողի հետ, Ալիանաս Հասան Գալախան, մի հրաշալի ազա, բաւական ստոյգ, զօրեղ կազմած քով և զարգացած, և երեքս միասին սրտեցինք մի սամառ առանց այլևայլութեան ճա- նապարհ ընկնել զէպի վան Պարս- կաստանի վրայով:

Այդ միջոցներին կովկաս Արմենիա էր գալիս և նրա մէջ գրուածներից

մենք այն եղբակացութեան էինք գալիս որ «Միութիւն Հայրենասի- րաց» յեղափոխական կազմակերպու- թիւն է և որպէս զի մեր գործը ա- լելի հասաատ հողի վրայ դնենք, մի նամակ գրեցինք Պ. Փորթուգալեանին մօտաւորապէս հետեւեալ բովանդա- կութեամբ.

«Մենք մի քանի երկտասարդներ պատրաստ ենք գնալ Տաճկահայաս- տան գոտ յեղափոխական նպատու- կով. մեր ծախքով, խնդրում ենք մեզ յայանեցէք թէ որ կողմը գնանք և արդեօք այնտեղ կարող ենք նոյն նպատակին ծառայող մարդիկ գտ- նել:»

Մի խմբագրութիւնից վերցրի Փոր- թուգալեանի ուղիղ հասցէն և այդ մեր բախար որոշեց. նամակը ուղար- կեցի: Մի քանի շաբաթ մենք սար- սափելի յուզման մէջ էինք, անհամ- բեր նպատում էինք Մարտիլիա փա- խած հայ Նշանաւոր յեղափոխականի ճակատագրական որոշումին: Վերջա- պէս բախտ ունեցայ և տանալ այդ ան- համբեր սպասված նամակը, որը գրեւծ էր շատ քաղաքավարի կեր- պով, «Միութեան Հայրենասիրաց» պաշտօնական թղթի վրա, աստեա- ղգրի և աստեաղագրի, եթէ չիմ մո- տացել, ստորագրութեամբ: Սակայն բովանդակութիւնը շատ իրազեկ ա- բուռ մեզ: Անորոշ ու երկդիմի մի պատասխան էր: Այդ օրը մենք հաս- կացանք Պ. Փորթուգալեանին և էլ նրանով չզբաղվեցինք: Որովհետեւ Պ. Փորթուգալեանին մեզինց մէկին

Մարտիլիա էր հրաւիրում իրեն հեռ- բանակցելու. մենք Տաճկաստան է- ինք ուղում. նա Ֆրանսիա էր կան- ջում մեզ:

Գործերը անցաւ, եկաւ ամառը, Ալիանասը գնաց հայրենիք, Բար- սիլը և ևս մնացինք Տիֆլիսում աչ- խատելու միջոցներ գտնել մեր նպա- տակը իրագործելու: Այդ միջոցնե- ին Մոսկովայի համալսարանից մի իրաւաբան ուսանող վերադարձիկ էր Տիֆլիս. այդ պարտուր բաւական ու- գետրված երկտասարդ էր ևս վճռել էր յեղափոխութեան համակրող երի- տասարդներին ժողովել և մտածել թէ ինչպէս պէտք է գործի սկսել: Ժողովները սկսվեցին. հաւաքվում էինք քանի չափ երկտասարդներ, բրտնց մէջ կային և երկու ու ու- ցեղներ: Յ. Ի. և Յ. Ա.: Այդ եր- կուսն էլ հուռատարիմ մնացին իրենց գրոչակին և մինչև և այսօր էլ յեղա- փոխաններ են: Այդ ժ. ղովները շատ տաք էին: Սակայն միայն ևս առա- ջարկեցի որ հենց հիմակվանից պէտք է գնալ Տաճկահայաստան: Իրաւա- բան ուսանողը շատ համակրից իմա- աջարկութեանը և խոստացաւ մի- ջոցներ հայթայթել: Սակայն դժ- բախտարար այդ միջոցները շատ չնչին կդան: Այնուամենայնիւ Բար- սիլը, ևս ևս մի ուրիշ երկտասարդ այդ չնչին միջոցներով ճանապարհ ընկանք զէպի վաղաքապատ, յու- սալով որ Իգտիբում մեր ծանօթ և իրտասարդների միջոցաւ կը կարու- ղանանք մի համեստ գուժար ձարիկ

և սահմանը անցնել: Ճանապարհ ընկանք, հասանք Իգտիբ, բայց մեր բոլոր երազածները ջուրը ընկան ու մենք մեզ բոլորովին անկարող զգա- ցինք առանց համեստ գուժարի, ա- ռանց կապերի գնալ մի օտար երկիր և բոլորովին անօգուտ նահասակ լինել:

Այդ միջոցին նոյնիսկ մեր ընկեր- ներից շատերը մեզ ծաղրեցին զըր- պարեցին. սակայն մենք այդ բո- յորը կուլ տուինք ամենայն պաղու- թեամբ և մանաւանդ ես վճռեցի մինչև մի որոշ ևս հաստատ հող չը լինի ոտքիս սակը ճամբայ չընկնեմ: Նորից երեքս էլ վերադարձանք Տիֆ- իլիս. յարաբերութիւններս մասամբ կարեցի նախկին ժողովականների հետ, մանաւանդ նրանց որոնք մեզ ծաղրում էին ասելով որ խօսքերս չը կատարեցինք:

Նորից սկսեցի գասալքերով գրաղ- վել և ստարաստվել քննութիւննե- րի համար:

87 թւականի աշնան յանկարծ մի օր լսեցի որ Պարսկաստանի Հաւթեան գիւղից եկել է մի երկտասարդ: Ա- ղեքսանդր (Վարդան) Գոյոչեան, նախ- կին աշակերտ Մոսկովայի Լազարեան ձեմարանի, որ կարծեմ չորրորդ գա- սարանից թողել էր փախել Պարսկաս- տան, որ այդ տեղից մտնէ վանայ նահանգը յեղափոխական գործունե- ութեան համար:

(Շարունակելի)

Տ. ՏԻԳՐԱՆ ՊԻՊԷՆԵԱՆ

Վայլը սենեկէրաէն պէրի վառ- նատա մուգիմ վէ էվվէլա թիծա- րէթլէ մէշուլ օլուպ շիմաի վառ- նատա Ալինախ թիծարէթ էվի- նին մաօլախաթիւղարը պուլու- նան Տ. Տիգրան Պիպէնեան Աճէմ տէվլէթի թարաֆընտան վառնա , Բուսուլը վէ էթրաֆ շէհրլէր վէ քէօյլէր իշին բէամէն վիւ-քօնո- ւօյ թային օլունմըլ տըր :

Հիւրմէթլի միւլէթաշմըլըն տէրիւհատէ իթտիկի պու էհէմմի- յէթլի մէմուրիլէթիւտէն տօլայը քէնտիսինի կէրմիլէթլէ թէպ- րիք իտուպ , սահա եիւքօք մէ- մուրիլէթլէրէ մալիք օլմանընը խալիտանէ արզու էյլէրիլ :

ԲՕԼԻԹԻԳԱ

Կ Ի Ր Ի Տ

Կէչէն շարշամպա կիւնի Բու- սիա սէֆարէթհանէ պիրինճի տրակօմանը եըլուղ սէրայը պի- րինճի քեաթիպի իլէ գօնուշուը- ղընտա , Կիրիտ ատասընա քրէնս Նորկիտըն վալի թային օլընմա- սընա տայիւր Բուսիա Չարըն վէր- տիկի ըէյլէրինի թէքրարլամըլ տըր :

Պիր օսմանըլ թէպաալը վալի- նին թայինինի իտար իթմէք ի- շին Պապը Ալի թարաֆընտան ախրէն չըգան պիր գաշ սիւր- քիւլէր նօթալարա ճէվապէն , Ինկիլթէրա խարիճիլէ նէղարէ- թիւտէն պա թէլէկրաֆ Սթան- պօլ ինկիլիպ սէֆիրի սըր Ֆիլիպ Բըրրիէ՝ պիր Եունան քրէնսին մէղքիւր ասայա վալի թային օ- լընմաըլ հազգընտա Պապը Ալի- նին հիսս իթտիկի գօրգուլարըն ասըլ էսասը օլմաաըլընը վէ պիւ աքիտ օսմանըլ թէպաալը վալի- նին նասպընտան ֆէնա նէթիճէ- լէր իլէրի կէլէպիլէճէկիւնի Սուլ- թանա անլաթմըլմասընը թալ- սիլէ իթմիշ տիր :

Կիրիտտէքի էվրոքա տօնան- մալարըն գօմանտանլարը ատա- տա պուլունան թիւրք ասքէրլէ- րին պաղը մէվգըլարա թօրլան- մաընը թալէպ իթմիշ օլուպ- լարընտան , Պապը Ալի կէչէնլէր- տէ էվրոքա տէվլէթլէրինէ Եէնի պիր սիւրքիւլէն նօթասը եօլլա- յուպ՝ ատատաքի թիւրք ասքէր- լէրին մէվգըլաշընը տէկիշտիր- մէք իշին ամիրալլարըն վէր- տիկի գարարը կէրի ալաըլմաղը ըէճա իթմիշ տիր :

ՊՈՒԿԱՐԻԱՎ ՎԷ ՌՈՒՄԱՆԻԱ

Էչէք ատասընըն թէսար- րուֆը (սեպհականութիւն) հազ- գընտա Պուլկարիտ վէ Բուսիա պէյնիտէ պիր մէսէլէ զուհուր իթմիշ տիր : Ռուսէն կաղէթա- լարըն սէօյլէտիկինէ նազարէն ,

կէչէնտէ մէղքիւր ատատա Ռու- մէն ասքէրլէր իքի պուլկար գօլ- ճը թուլթմըլար վէ թարաֆէյն ասքէրլէր պէյնիտէ պիր միւ- սատէմէ վուգու պուլուպ չօգ ա- տամ էօլմիւշ իմիշ :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Սթանպօլ Եունան սէֆիրի բը- րէնս Մալրօհօրտաթօ մէգուէն Ֆրանսայա կիթմիշ օլաըլընտան , Եունան թիւրք միւլաքէրաթը թէլիւր օլունմաշար տըր :

—Մ. Չօլայը Եէնիտէն՝ սալա- յա վէրմէկի գարարլաշտըլմըլ օլան Ֆրանսա սիլանի հարպը մէշուր հիքեայէնիվիտին Լէ- ժիօն տ՝Օնէօրլիպ մէնսուպընտան թարտընա տայիւր արզու պէյան իթմիշ տիր :

—Վայիմէ Սուլթանըն նիքեա- հը միւնասիպէթի իլէ , Սուլթան՝ Սէլանիքտէ վէ էթրաֆ մահալ- լէրտէ պուլունան պիր գաշ պուլ- կար մահպուլարընա սվֆ իթ- միշ տիր :

Գօսօվա սօն վուգուաթլարընա իշթիւրազ իտուպ տէրաէսթ օլը- նան պուլկարլար՝ ան հիշ պիրի- սինէ սվֆ օլմամըլ տըր : Խէլաս օլանլար քէնտի բահիպլէրի հու- զուրընտա՝ պունտան պէօյլէ Սուլ- թանա գարշը պիր հարէքէթտէ պուլունմայաճաղարը իշին Եէ- մին իթմիշլէր տիր :

—Սթանպօլտա նէշը օլունան պուլկար բէսի կաղէթանըն մու- հարիւրինի Մ. Մակեթմնքիի քէն- տի պիւրօսընտա բէվոլլէր իլէ գաթլ իթմիշ օլան Մակեթմնիալը Սթանպօլտան Աթինայա գաշ- տըլտան սօնրա կէչէն կիւն վառ- նայա կէլմիշ տիր : Եունան հիւ- քիւմէթլի մէղքիւր գաթլիլին պու- ռայա կէլտի ինի վառնա Եունան վիւ քօնօլօսընա պա թէլէկրաֆ պիլտիւրմիշ վէ վառնա զապլթիլէ նաշալիկի տախի էվվէլէ իշիթ- միշ օլուպ , վարօրտան չըգտըլը սըրատա գաթլիլ տէրտէսթ իթ- տիրմիշ տիր : Գաթլիլ նաշալիկ հուզուրընտա իճրա իթմիշ օլու- զու ճիւնայէթի իթիւրաֆ իթմիշ տիր :

—Կէչէն բէնչէնպիհ կիւնի Սթանպօլ րուս էլլիտի Մ. Չինօ- վիլէֆ պիրինճի թէրճէման Մ. Մաքսիմով իլէ պէրապէր Պատ- րիարքարանա կիտիպ Օրմանեան Պատրլարք իլէ միւլաղաթ իթ- միշ տիր :

—Սոֆիատան չէքիլէն պիր թէ- լէկրաֆա կէօրէ , Բիւսթէնտիլ տիվանը հարպը Սիւլպ սանճա- ղընտա Գեաղիմ պէյի վէ գարը- սընը էօլտիւրմիշ օլան Գօշանալը եիւրմի պուլկարլարըն տալաընա պազըպ տէօրտի 101 սէնէ , պէչի օն սէնէ , օնը պէշ սէնէ վէ պի- ըրի իւշ սէնէ գալէպէնտիկէ հիւքմ իթմիշ տիր :

—Սթանպօլ պուլկար մալա- հաթիկիւրը Մ. Մարքօֆ Սօֆ-

Կայա կէլմիշ տիր : —Գրալ Եորկիտըր գաթլ իթ- մէք իսթէմիշ օլաուղը իշին ի- տամ ճէզասընա հիւքմ օլունան Գարաիլի ատիլէ նէզարէթիւնէ պիր իսթիտա վէրիպ վէրէմ հաս- թալըլընա տիւշար օլաուղը իշին պու միւտհիշ ճէզանըն մէվգըլի իճրայա գօնուլմամասըլը ըէճա իթմիշ տիր , զիրա էօլլալի հասթալըլարա միւլաթէլա օլան մահքիւմլէրէ պիր ատէթ իւլրէ սվֆ օլունըր ըմըլ :

—Չին հիւքիւմէթի Բուսիայա , Սթանպօլ պիրէր իքիշէր լի- ման վէրաիքտէն ոօնրա , պու տէֆա վէյ-Հայ-Վէյ լիմանընը ուսուլճաճըք Ինկիլթէրայա թէս- լիմ իթմիշ տիր : Պու արա Ին- կիլթէրա տօնանմասը Չին վէ ճարոն սուլարընա բիւ բիւ կէզ- մէքտէ օլաըլընտան , ճարոն կա- ղէթալարը պու շէյաէն տըրըլ- տանմազաա տըրլար :

ՇՆՈՐՀԱՅԱՆՈՒԹՅՈՒՆ

—)(—

Հրապարակաւ շնորհակալու- թիւնս կը յայտնեմ , Գլուկտըր կեանքի ապահովագրական ընկի- ռութեան Պուլկարիոյ , նօրէն Տ. Կ. Կէօրկօլի , որ կարճ ժամա- նակի մէջ ինձ վճարեց հանգուց- եալ ամուսնիս ապահովագրած 5,000 ֆրանքի գումարը , ինչպէս նաեւ անոր 5 տարուան մէջ հա- տուցած 1,025 ֆրանքի ապահո- վագիւնը , ընդ ամէնը 6,025 ֆր. ոսկեգրամ , զոր ստացած եմ պուլկարական ազգ. պանդայի մի- շոցա :

Ե. ՊԱՆՄԷՉՈՎԱ Սոֆիա , 18 դեկտ. 1897

Թ Լ Ս Թ Ր Ո

—)(—

Էտէն թէլաթրօ գումբանեասը՝ Շըվալիէ Էրնէսթ Թօրն խարէսի թահթընտա , եարըն ազաւմ պի- րինճի տէֆա օլարապ Մ. Տասրա- լօֆըն սալալընտա , պիրինճի գաթլտա օյնայաճաղ տըր : Բա- զար իրթէսի վէ սալը կիւնի էօյ- լէնտէն սօնրա սաաթ 3տէ վէ ազաւմ սաաթ 9տա իճրաի թէմա- շա օլուպ , կէլէճէք բաղարա գա- տար հէր ազաւմ օյուն օյնանա- ճաղ տըր :

ԿՈՐՍՈՒՄ

—)(—

Փոքր Արմատանցի նչան Գալիթ Բարիկեան անուն 19 տարեկան երիտասարդ մը երկուքուկէս սա- րիլէ ի վեր անչայա է . ու թէեւ իր բարեկամները լսած են թէ այդ պարոն Ռուսանիոյ ու Պուլկարիոյ կողմը կը գտնուի , ցարդ հաս- տատական լուր մը աւնուած չէ : Ռուսի կը ինդրուի տյն աղ- զայիններէն որ յիշեալին ուր , ողջ կամ մեռած ըլլալուն մասին տեղեկութիւն ունին , հաճին ող- զակի իմաց սալ լմբագրու- թեանս :

1—3

Ա Չ Դ

Ռուսանիոյ ֆօքշան քաղաքի հայոց եկեղեցւոյն համար կուղ- ուի քաջահմուտ երաժիշտ մը որ ունենայ ախորժալուր ձայն , գոլիլի նկարագիր և 30—40 տա- րիք :

Փափաքողներն դիմեն առ՝ M. F. Ferhatian à Focsani en Roumanie

ՊՕՐՍԱ

Վառնա 5 Ապրիլ

ՊՈՒՂՏԱՅ Վալօն , լիպրա 47—51 , հէքթօլ 10.20—10.80 ֆրանք Արապա , լիպրա 47—55 հէքթօլ 9—12 ֆրանք

ԱՐԲԱ Լիպրա 38—40 հէքթօլ 4.60—5.20 ֆրանք

ՄԸՍԸՐ Վալօն , լիպրա 57—58 հէքթօլ 6.41—6.51 ֆրանք

Արապա , լիպրա 57—60 հէքթօլ 6.60—6.80 ֆրանք

ՏԱՍՈՒԼԵԱ 100 օգգասը 16—20 ֆրանք՝ մալա կէօրէ

Առապա մուսիլէսի նարօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր . Կիւնտէ 8—10 վալօն վէ 15—20 ա- րապա պուլտայ , 10—15 արապա ար- բա , 4—5 վալօն վէ 8—10 արապա մըսըր կէլմէքտէ տիր :

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

Հայ Գաղթականութեան Ի Հնդկաստան

Հնդկաստանի հայ գաղութի մասին պատմական և ազգագրական խիստ շահեկան տեղեկութիւններ պարու- նակող սոյն անգլիերէն երկասիրու- թիւնը , զոր հեղինակը Տիար Մու- րովպ Սէթեանց՝ Կալկաթայէն զրկած է մեզ , կարճէ որ ամէն անգլիագէտ ազգայիններու թանգարանին մէջ գտնուի :

Գին Շ ՇԻԼԻՆ

Կեղրոնտեղի վառնա Ապուրա- ման մզկիթի դէմը , Ա. Չարսահանէլեան Հայկական Կրատան մէջ :

ՏՊԱՐԱՆ ՆՇԱՐԺՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս , հասցեատոմս , նառնա- կաղուլս , հարսանեկան հրաւի- րագիր , մահազգ , ինչպէս նաեւ պրօշիւտներ :

Գիններն յոյժ դիւրամատչելի . Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատար- ուին :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

—)(—

Վառնաի մէջ կը վաճառուի Մու- սալլա , թահիլիզ Կէօղիպէօյի քեանի խանութը , Սասուն սրճարանի ծխա- վաճառին քով և Ապուրաբանան մզկիթին դէմը հայկական գրատու- նը , Ա. Չարսահանէլեանի քով :